«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում »ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ Նոր ուղու միջնակարգ

Թեմա՝ Միջազգային մարդասիրական իրավունք

Առարկա՝ Նախնական զինվորական պատրաստություն

Ուսուցիչ՝ Թորոս Հովհաննիսյան

Վերապատրաստող՝ Մարինե Զարոյան

ԱՐԱՐԱՏ 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության գերակա խնդիրը դպրոցականի անձի զարգացումն է, նրա՝ որպես ուսումնական գործընթացի և ինքնազարգացման սուբյեկտի կայացումը և անհատականության ձևավորումը: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկմամբ բացահայտվում են դրանց ձևավորվածության մակարդակները և ուսուցման գործընթացում առկա թերությունները, որոնք նրանք ձեռք են բերում ուսումնական աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլում: Այդ տեսանկյունից դպրոցում սովորողների ուսման որակի վերահսկումը, գիտելիքների գնահատումը համարվում է ուսուցման գործընթացի էական բաղադրիչը, որոնցով և բնութագրվում է դպրոցի գործունեության արդյունավետությունը: Այն ենթադրում է ոչ միայն գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակի բացահայտում, այլև ուսումնական գործունեության դրդապատճառների ձևավորում, ինքնավերահսկաման, ինքնգնահատման, ինքնաստուգման կարողությունների զարգացում: Սովորողների ուսումնական հաջողությունները պայմանավորված են նաև աշակերտի ուսումնական դրդապատճառներով, ինքնուրույնությամբ, ակտիվությամբ, որով և պայմանավորված է թեմայի արդիականությունը: Ուսուցիչների մանկավարժական գործունեության նպատակը այսօր դառնում է ոչ միայն գիտելիքների հաղորդումը, այլև սովորողների ինքնագործունեության կազմակերպման հմտությունների ձևավորումը, որն իր հերթին ենթադրում է ուսուցչական հսկողության փոխարինումը սովորողների կողմից սեփական գործունեության ինքնահսկմանն ու ինքնակարգավորմանը: Ուսուցման սկզբունքների, տարբեր մեթոդների ու ձևերի կիրառման արդյունավետությունը, դասագրքերի նպատակային օգտագործումը և մեթոդական մշակումների որակը, կրթության բովանդակությունը ուղղակիորեն կապված են այդ հիմնախնդրի լուծման հետ:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը, ստուգումը և գնահատումը ուղղված են սովորողների ուսուցման արդյունքի և ուսման որակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացմանը, որը վերլուծելով ուսուցիչը անհրաժեշտ շտկումներ է մտցնում ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման մեջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը՝ Ուսումնասիրել սովորողների գիտելիքների, կարողությունների գնահատման արդի համակարգը, մշակել և առաջադրել մանկավարժական պայմաններ:

Հետազոտության օբյեկտը՝ սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման գործընթացն է:

Հետազոտուտության առարկան՝ սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման մանկավարժական գործունեության համակարգն է:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել և վերլուծել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, դրանց հաշվառման, ստուգման ու գնահատման ավանդական և ժամանակակից համակարգերը:
- մշակել սովորողների գիտելիքների, կարողությունների գնահատման արդի համակարգի մանկավարժական պայմաններ:

Յուրաքանչյուր քաղաքացի պետք է գիտենա և անշեղորեն պահպանի միջազգային մարդասիրական (ՄՄԻ) նորմերը:

Ձինղեկն ինքը պետք է ուսումնասիրի և աշակերտներին հասկանալի լեզվով բացատրի միջազգային մարդասիրական իրավունքի էությունը: Պետք է նշել, որ դա զինված ընդհարումների ժամանակահատվածում կիրառվող իրավական սկզբունքների ու նորմերի համակարգ է:

Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը գործողության մեջ են դրվում զինված ընդհարման սկսվելու հետ: Այն հավասար չափով կիրառվում է ընդհարման մասնակցող բոլոր կողմերի նկատմամբ:

Միջազգային մարդասիրական իրավունքի նպատակն է՝ որքան հնարավոր է թեթևացնել մարտական գործողությունների պատճառած աղետներն ու զրկանքները:

Միջազգային մարդասիրական իրավունքը սահմանում է մարտական գործողությունների վարման եղանակների ու միջոցների մի շարք սահմանափակումներ և արգելքներ, որոշում է մարտական գործողությունների

վարման գոտում գտնվող անձանց և օբյեկտների իրավիճակը, կարգավորում է միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության տակ գտնվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև սահմանում է պետությունների և առանձին անձանց պատասխանատվությունը միջազգանին մարդասիրական իրավունքի նորմերի խախտման համար:

Արգելվում է այնպիսի զենքի կամ պատերազմելու եղանակների կիրառումը, որոնք կարող են առաջացնել ավելորդ ավերածություններ և տառապանքներ:

Այդ ամենը վերաբերվում է բոլոր տեսակի զինված ընդհարումներին (միջազգային, ներքին):

Զինղեկը պետք է նշի, որ զինված ընդհարումների զոհերն են՝ վիրավորներն ու հիվանդները, անհետ կորածները, մահացածները զոհվածները, ինչպես նաև մարտական գործողությունների շրջանում գտնվող քաղաքացիական անձինք, որոնք կարիք ունեն բժշկական օգնության ու խնամքի և ձեռնպահ են մնում ցանկացած թշնամական գործողություններից:

ՄՄԻ- ի ուսուցումը ունի իր որոշ առանձնահատկությունները

Ուսուցման փուլերը:

Զինված ընդհարումների կոնֆլիկտնրի ուսուցման գործընթացում գոյություն ունի երկու աստիճան՝

- տեսական պատրաստություն
- գործնական պարապմունք

Ա. Տեսական պատրաստություն:

Ուսուցման նպատակը: Աշակերտներին գաղափար տալ զինված ընդհարոումների իրավունքի (ԶԸԻ) մասին, որն անհրաժեշտ է նրա պարտականությունների կատարման համար:

Ուսուցման ձևը՝

- դասարանային պարապմունքներ
- դաշտային պարապմունքներ

Նյութական ապահովումը: Դասագրքեր, ուսումնական զենք և այլ նյութեր:

Բ. Գործնական պարապմունք: Հարձակում հակառակորդի օբյեկտի վրա:

Ուսուցման նպատակը: Հակառակորդի գերված մարտիկների հետ վարվելը: Մարդասիրական հատկանիշների դաստիարակում:

Մեթոդը: Ցուցադրական:

Տեղը: Դաշտային պայմաններ

Ժամանակը: 1ժամ

Անձնակազմը: Հակառակորդի մարտիկներին և քաղաքացիական անձանց ներկայացնող 5-6 աշակերտ:

Պարապմունքի սցենարը: Ջոկը պարեկություն է անում այն շրջանում, որտեղ վերջին հետախուզական տվյալների համաձայն հակառակորդի ուժերն ակտիվորեն գործում են: Առանձին կանգնած տանը մոտենալիս ջոկն ընկնում է շենքում թաքնվող մարդկանց կողմից բացված կրակի տակ: Պարեկի ավագը վիրավորվում է:

Սկսվում է ուժգին փոխհրաձգություն, և ջոկի հրամանատարն ընդունում է շենքը գրոհելու որոշում: Ծխագլանակների ու կրակի քողարկման ներքո շրջապատում են շենքը: Պատոհաններից մեկից թափահարում են սպիտակ կտոր, և կրակը դադարեցվում է: Շենքից դուրս է գալիս հակառակորդի մարտիկը, որը տանում է վրիավոր ընկերոջը: Նա գցումէ զենքը: Շենքը գրավելուց հետո հայտնաբերվում են հակառակորդի զինվորներ և մի քանի քաղաքացիական անձ:

Ջինղեկն աշակերտներին բացատրում է գերիների հետ վարվելակերպի կանոնները:

ա) Հակառակորդի զինված մարտիկներին, որոնք գերի են հանձնվել՝

- խնայել
- զինաթափել
- ապահովել մարդասիրական վերաբերմունք
- օգնություն ցուցաբերել
- հանձնել իրանմիջական հրամանատարին կամ սանիտարական անձնակազմին:

բ) Քաղաքացիական անձանց՝

- հարգալից վերաբերվել
- չվիրավորել նրանց արժանապատվությունը

- ցոցաբերել բժշկական և այլ օգնություն
- պաշտպանել շրջապատի անհարգալից վերաբերմունքից

գ) Զոհվածներին՝

- անձը պարզել
- հանձնել հողին գերեզմանը պետք է նշվի
- տարհանել թիկունք:

Պարապմունքից հետո զինղեկը ամփոփում և գնահատում է մասնակիցների գործողությունները:

Սովորողների կազմը, լինելով խիստ բազմազան, ունենալով ընկալունակության տարբեր մակարդակ, անհատական առանձնահատկություններ, յուրովի խառնվածք ու բնավորության գծեր՝ զինղեկից պահանջում է տարբերակված մոտեցում: Հենց այդ տարբերակված մոտեցումն էլ իր կնիքն է դնում ուսուցման մեթոդի բազմազանության վրա:

Շատ սեղմ ներկայացնենք վերհիշենք ուսուցման մեթոդները:

1 Ուսուցման հիմնական ավանդական մեթոդներն են՝

1. պատմողական (դասախոսություն)

2. զրույցի մեթոդ (հարց ու պատասխան)

3. ցուցադրում

4. վարժությունների մեթոդ

5. կրկնողություն կամ մարզումներ

6. ինքնապատրաստում

Զինղեկն այս մեթոդները պետք է կիրառի ստեղծագործաբար:

Ճիշտ չի լինի մտաածել, թե դրանք իրարից անկախ, միմյանց հետ ոչ մի կապ չունեցող մեթոդներ են: Դրանք, իհարկե, կարող են կիրառվել միաժամանակ՝ միևնույն պարապմունքի ընթացքում: Զինղեկի վարպետությունն էլ կայանում է նրանում, որ կարողանա տարբեր մեթոդները կիրառել ստեղծագործաբար՝ ելնելով պայմաններից, ունկնդիրների մակարդակից, թեմայի բարդությունից:

Դիտարկենք այդ մեթոդներն առանձին-առանձին:

1. Պատմողական մեթոդ: ՆԶՊ-ի ուսումնական ծրագրով նախատեսված թեմաների որոշ մասի ուսուցումն անցկացվում է պատմողական մեթոդով: Այս մեթոդի էությունն այ է, որ պարապմունքի թեման շարադրվում է բանավոր՝ բացատրելով նյութի բովանդակությանը: Ձինղեկը նախ պատմում է հանձնարարվող նյութը ապա այլ մեթոդների կիրառմամբ այն ամրապնդում է աշակերտների հիշողության մեջ:

2. Զրույցի մեթոդ: Ուսուցման մեթոդն ըստ էության կարելի է համարել պատմողական մեթոդի շարունակությունը: Զրույցի մեթոդը որոշակի աշխուժություն է հաղորդում պարապմունքին, հնարավորություն ընձեռում հիշողության մեջ ամրապնդել ուսուցչի պատմածը և լավ յուրացնել պարապմունքի թեման: Բացի դրանից, աշխույժ, կենդանի զրույցը զարգացնում է սովորողների խոսքի կուլտուրան, միմյանց հետ թեմայի շուրջ հաղորդակցվելու հնարավորություն ընձեռում:

Պարապմունքներն անցկացվում են հետևյալ կերպ:

Նյութը շարադրելուց հետո զինղեկը հարցերով դիմում է ունկնդիրներին, որոնք ոչ միայն պատասխանում, այլև իրենք նույնպես հարցեր են տալիս միմյանց: Ստացվում է աշխույժ ու հետաքրքիր զրույց: Մասնակիցների ակտիվ զրույցը, բացի նյութի յուրացմանը նպաստելուց, ունի նաև դաստիարակչական մեծ նշանակություն: Այն համախմբում է կոլեկտիվը, ստեղծում առողջ մթնոլորտ, նպաստում ինչպես աշակերտների ամենօրյա, այնպես էլ ապագա զինծառայողների կանոնադրական փոխհարաբերությունների զարգացմանը:

Ձինղեկին և սովորողներին օգնելու նպատակով թեմաների վերջում տրված են հարցեր և առաջադրանքներ, որոնք պետք է օգտագործել պարապմունքների ժամանակ: Բայց այդ հարցերն ու առաջադրանքները դոգմա լինել չեն կարող: Ինչպես զինղեկը, այնպես էլ պարապմունքի բոլոր մասնակիցները պետք է կարողանան թեմային վերաբերող, դրա յուրացմանը նպաստող նոր հարցեր գտնել ու առաջադրել միմյանց: Այսպիսով, կստացվի քննարկման նման մի բան:

Այս մեթոդով կարելի է անցկացնել գրեթե բոլոր պարապմունքները:

3. **Ցուցադրման մեթոդ:** Ցուցադրման մեթոդը նպատակէ հետապնդում տեսողական պատկերի միջոցով նախ սովորողների մեջ ավելի տպավորիչ դարձնել պարապմունքի նյութը, ինչպես նաև կատարելագործել նրանց հմտությունը: Ցուցադրումը, որպես նյութի յուրացման խիստ արդյունավետ մեթոդ, ավելի հաճախակի կիրառվում է ՀՀ ԶՈՒ – ի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի, կրակային պատրաստության, ռազմական տեղագրության, մարտավարության, անվտանգ կենսագործունեության և առաջին բուժօգնության մի շարք թեմաների ուսուցման ժամանակ:

4. Վարժությունների մեթոդ: Այս մեթոդի էությունն այն է, որ նյութը շարադրելուց, ցուցադրելուց, հարց ու պատասխանի զրույցի մեթոդով պարապմունքը վարելուց բացի հաճախակի կատարվում են նաև վարժություններ: Անցած թեմաների արդյունավետ յուրացման համար տեսական, պատմողական մատուցումը, զրույցը, ցուցադրումը կարող են ժամանակի ընթացքում հեշտությամբ մոռացվել, եթե դրանք չամրապնդվեն վարժությունների միջոցով:

Վարժությունները մի տեսակ գործնական աշխատանք են, որոնց ընթացքում զինվորը նպատակադրված ու հետևողականորեն բարդացնում է ուսուցանվող նյութի գործողությունները, դրանով իսկ ամրապնդելով սովորողների ունակություններն ու հմտությունները: Վարժությունների հաճախակի կատարմամբ սովորողներն այնպես են յուրացնում նյութը, որ դրա կատարումն իրենց համար դառնում է վարժաձևի մեխանիկական կրկնություն:

5. **Կրկնության կամ մարզումների անդրադարձի մեթոդ:** Կրկնությունը կամ մարզումները, որպես ուսուցման մեթոդ, ՆԶՊ առարկայի դասավանդման մեջ առավել տարածված ձևերից են: Ռազմական գործի ուսուցումն անհնարին է պատկերացնել առանց մարզումների:

Մարտական պատրաստության բոլոր առարկաների ուսուցումը նպատակային լինել չի կարող, եթե մոռացության տրվի ուսուցման մարզումների մեթոդը: Մարզումներն անդրադարձը անցած թեմաների յուրօրինակ կրկնություն են, տեսական գիտելիքների ամրապնդման և սովորողների ունակությունների և հմտությունների բազմապատկման ամենաընդունված ու տարածված միջոց:

6. Ինքնապատրաստում: Ինչպես գիտության բոլոր բնագավառներում, այնպես էլ նախնական զինվորական պատրաստության մեջ ինքնապատրաստումը համարվում է լայնորեն կիրառվող արդյունավետ մեթոդ: Առավել ևս դպրոցական ուսուցման համակարգում, որովհետև ծրագրով նախատեսված ժամերը այնքան սահմանափակ են, որ չեն կարող ընդգրկվել ամբողջ հսկայածվալ նյութը: Ուստի, սահմանափակ ժամերի հետևանքով առաջացած բացը ինչ-որ չափով կարող է լրացնել ինքնապատրաստումը. այսինքն՝ սովորողների ինքնուրույն աշխատանքը կամ ինքնուսուցումը:

Ինքնապատրաստումը, որպես ուսուցման մեթոդ, սովորողներին հնարավորություն կտա խորացնելու իրենց գիտելիքներն անցած նյութի վերաբերյալ, լրացուցիչ տվյալներ ձեռք բերել այս կամ այն թեմայի մասին: Աշակերտը կսովորի օգտվել սկզբնաղբյուրներից: Ինքնուսուցմանը մեծապես կարող են նպաստել հեռուստատեսային հաղորդումները, ռադիոլսումները, լրացուցիչ գրականության ընթերցումը:

Սակայն սխալ կլինի մտածել, թե այդ ամենը պետք է կատարվի ինքնաբերաբար, ինքնահոսի կարգով: Այս գործում մեծ է զինղեկի դերը: Նա պետք է համապատասխան ուղղություն տա սովորողների ինքնապատրաստմանը, հուշի նրանց, թե ինչ կարելի է կարդալ այս կամ այն նյութի վերաբերյալ և այլն:

2) Ուսուցման ժամանակակից մեթոդները**:** Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:

Դրանց առանձնահատկություններն են՝

1. աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի

2. աշակերտն ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն ստեղծագործական, վերլուծական մտածողությանը

3. աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար.

4. աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցություն, հաղորդակցական կարողություններ.

5. նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը.

6. ստեղծվում է ինքնակրթության միջավայր.

Ինտերակտիվ մեթոդը ներառում է մի շարք մեթոդներ և մեթոդական հնարքներ, որոնք կարելի է բնութագրել որպես ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) համակարգ: Ուսուցման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝ խթանման (ներածական), իմաստի ընկալման (հիմնական) և կշռադատման (ամփոփիչ):

Հիշենք ամենաթարմ դեպքերից մեկը. Արցախյան ազատամարտի ժամանակ, երբ հայկական զինվորական կազմավորումները գրավում էին Խոջալուն և Շուշին, նրանք միջանցք թողեցին խաղաղ բնակչության նահանջի համար, չնայած մինչ այդ ազերիները խոշտանգել ու ողջ-ողջ այրել էին Սումգայիթի հայ բնակիչներից շատերին: Գթասրտությունն ու կարեկցանքը մարդ արարածի էության անբաժանելի մասն են նրա գոյության հենց սկզբից: Ուստի պատերազմների արհավիրքները մեղմելու, մարդու իրավունքի կանոններ մշակելու փորձեր եղել են դեռևս 4 հազարամյակ առաջ: Մշակվել են բանագնացների անձեռնմխելիության, հրադադարի, հաշտության պայմանագրի, պատերազմող կողմերի ստանձնած պարտավորությունների պարզագույն կանոններ: Սակայն միայն քաղաքակրթության զարգացումը անխուսափելիորեն թելադրեց հիմնավոր ուղիներ որոնել մարդկությունը պաշտպանելու պատերազմների հարուցած չարիքներից, հրեշավոր գազանու թյուններից: Սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից և հատկապես 20-րդ դարում մշակվեցին Միջազգային մարդասիրական իրավունքի նորմեր: Դրանք հայտնի են

«Զինված ընդհարումների իրավունք», « Պատերազմի իրավունք», « Պատերազմի իրավունքներ և սովորույթներ» և այլ անվանումներով:

Միջազգային մարդասիրական իրավունքը կամ, ինչպես ընդունված է ռազմագիտության մեջ անվանել՝ զինված ընդհարումների իրավունքը, արդի միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասերից մեկն է: Միջազգային մարդասիրական իրավունքի էությունն այն է, որ կանոնակարգում է զինված ընդհարումները՝ նպատակ ունենալով թեթևացնել մարդկային տառապանքները, մեղմել պատերազմների պատճառած ցավալի հետևանքները: Այդ իրավունքը կոչվում է մարդասիրական, որովհետև պաշտպանում է անհատի արժանապատվությունը, ազատ և արժանավայել ապրելու նրա ձգտումները:

Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի մշակմանը մանրամասնորեն անդրադարձել են Ժնևի 1864, 1906, 1929 թվականների և Հաագայի 1899, 1907 թվականների կոնվենցիաները: Այդ կոնվենցիաների մշակած սկզբունքների հիման վրա Ժնևյան 1949 թ. կոնվենցիան ավելի ամփոփ կանոնակարգեց հետևյալ հիմնական դրույթները՝

- գործող բանակներում հիվանդացածների և վիրավորների վիճակը բարելավելու մասին,
- վիրավորված և հիվանդացած ծովայինների վիճակը բարելավելու մասին,
- ռազմագերիների հետ վարվելու մասին,
- պատերազմների ժամանակ բնակչության պաշտպանության մասին: Հաագայի և Ժնևի կոնվենցիաները պատերազմի օրենքների, քաղաքացիական բնակչության պաշտպանության, զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության հարցերի մասին անդրադարձել են նաև 1954, 1977, 2005 թթ. կոնվենցիաներում և լրացուցիչ արձանագրություններում:

Վերոհիշյալ կոնվենցիաներում և լրացուցիչ արձանագրություններում առաջադրված սկզբունքներն ու նորմերը կանոնակարգում են՝

- մարտական գործողությունների վարման որոշ սահմանափակումներ,
- վիրավորների և գերիների կարգավիճակը,
- քաղաքացիական բնակչության իրավունքների հարգումը,
- բժշկական և հոգևոր անձնակազմի իրավունքների ճանաչումը,

• մշակութային արժեքների պաշտպանությունն ու պահպանումը,

• պատերազմող պետությունների և առանձին անձանց պատասխանատվությունը ՄՄԻ-ի նորմերի խախտման դեպքում: Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը գործողության մեջ են դրվում զինված ընդհարումների սկսվելու պահից: Դրանք հավասար չափով կիրառվում են պատերազմող բոլոր կողմերի նկատմամբ: Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կիրառումը դադարեցվում է (բացառությամբ ռազմագերիների և մշակութային արժեքների պահպանության) մարտական գործողությունների ավարտի հետ միաժամանակ:

Միջազգային մարդասիրական իրավունքը սահմանում է մարտական գործողությունների վարման հետ կապված արգելված մեթոդներն ու եղանակները: Որպես հիմնական սկզբունք սահմանվում է զինված պայքարի ժամանակ որոշ միջոցների ու եղանակների արգելում: Համաձայն այդ սկզբունքի, պատերազմող կողմերն իրավունք ունեն օգտագործել միայն զինված պայքարի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են հակառակորդին ճնշելու և հաղթանակի հասնելու համար: Այդ ընթացքում արգելվում են՝

• հարձակվել քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների վրա,

• հակառակորդի քաղաքացիներին ստիպել մասնակցելու իրենց երկրի դեմ ուղղված ռազմական գործողություններին,

• կողոպտել գրավված տարածքների ու բնակավայրերի նյութական արժեքները, ինչպես նաև բնակիչներին,

• պատժամիջոցներ կիրառել պաշտպանությունից օգտվող անձանց դեմ, սովի մատնել խաղաղ բնակչությանը կամ ահաբեկել սովի սպառնալիքով,

• հարձակումներ կատարել խաղաղ բնակչության գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտների՝ սննդամթերքի պահեստների, ցանքատարածությունների, խմելու ջրի մատակարարման կենտրոնների վրա և այլն,

• վնասել կամ ավերել պատմական հուշարձանները, մշակույթի այլ արժեքները և այլն:

Պատերազմի զոհերի մեջ զգալի թիվ են կազմում հիվանդներն ու վիրավորները, որոնց տառապանքները շարունակվում են նաև պատերազմից հետո՝ տասնյակ տարիներ շարունակ խլելով միլիոնավոր կյանքեր և բազում հոգսեր

պատճառելով համայն աշխարհի հասարակությանը: Ահա այն հիմնական պատճառը, որ ծառացել է միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) առջև՝ բազմիցս անդրադառնալով պատերազմի զոհերի հենց այս կատեգորիաների (խմբերի) պաշտպանությանը՝ նրանց տառապանքները մեղմելու նպատակով: *Հիվանդների և վիրավորների կարգավիճակը* կարգավորվում է Ժնևի 1949 թ. առաջին և երկրորդ կոնվենցիաներով, ինչպես նաև 1977 թ. առաջին լրացուցիչ արձանագրությամբ: Նշված խմբերի պաշտպանությունը պայմանավորված է ռազմական գործողություններին նրանց չմասնակցելու փաստով: Հիշյալ անձանց ցանկացած թշնամական գործողություն կարող է նրանց զրկել այդ պաշտպանությունից: Անհրաժեշտ է նշել, որ հիվանդներ և վիրավորներ կատեգորիան ներառում է նաև հղի կանանց ու տկարներին, եթե նրանք ձեռնպահ են մնում ցանկացած թշնամական գործողությունից:

Հիվանդների, վիրավորների պաշտպանությունը: Միջազգային մարդասիրական իրավունքը, ելնելով հիվանդների և վիրավորների առանձնահատուկ կարգավիճակից, սահմանում է նրանց հետ վարվելակերպի հիմնական սկզբունք: Անկախ այն բանից, թե նրանք որ կողմին են պատկանում՝ օգտվում են հարգանքից և պաշտպանությունից: Նրանց հետ բոլոր հանգամանքներում պետք է վարվել մարդասիրաբար, առավելագույն չափով ու ամենակարճ ժամկետում նրանց տրամադրել համապատասխան բժշկական օգնություն:

Մշտապես պետք է արգելված լինեն նրանց նկատմամբ հետևյալ գործողությունները՝

- կյանքի և անձի հանդեպ ոտնձգությունները,
- սպանելը, խոշտանգումների ենթարկելը,
- նրանց վրա կենսաբանական փորձեր կատարելը,
- միտումնավոր կերպով առանց բուժօգնության և խնամքի թողնելը,
- կանխամտածված կերպով նրանց վարակման պայմաններ ստեղծելը:

Ժնևյան կոնվենցիաները հստակորեն արգելում են հիվանդների, վիրավորների միջև խտրականություն դնելը անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, կրոնական պատկանելիությունից, քաղաքական համոզմունքների տարբերություններից, ինչպես

նաև սեփական կամ հակառակորդ կողմին պատկանելու փաստից: Միակ հիմքը, որով կարելի է տարբեր մոտեցում ցուցաբերել նշված անձանց նկատմամբ, բժշկական նկատառումներն են, մասնավորապես՝

- անհետաձգելի բնույթի բժշկական օգնու թյուն ցուցաբերելու պատճառները,
- վնասվածքների ծանրությունը,
- ընդհանուր առողջական վիճակը կամ կյանքին անմիջական վտանգի սպառնալիքը:

Կոնվենցիաները հատուկ պաշտպանության տակ են վերցրել կանանց, նախատեսելով, որ նրանց հետ պետք է վարվել առանձնակի հարգանքով: Հայտնվելով հակառակորդի իշխանության ներքո՝ զինված ուժերի կազմից հիվանդներն ու վիրավորները ձեռք են բերում ռազմագերու կարգավիճակ:

Ռազմական գործողությունների ընթացքում հնարավոր չէ ապահովել հիվանդներին ու վիրավորներին տրամադրված մարդասիրական երաշխիքները, եթե պաշտպանության տակ չներառվեն նաև բժշկականսանիտարական հաստատություններն ու կազմակերպությունները, նրանց անձնակազմը, ինչպես նաև նրանց կողմից այդ նպատակներով օգտագործվող փոխադրամիջոցները: Այլ կերպ ասած, եթե հիվանդներին ու վիրավորներին պաշտպանություն է տրամադրվում՝ ելնելով նրանց վիճակի ծանրությունից և ռազմական գործողություններին մասնակցություն ցուցաբերելուց, ապա սանիտարական և բժշկական հաստատություններն ու կազմավորումները պաշտպանության տակ են վերցնում առաջիններին՝ անհրաժեշտ բուժօգնություն և խնամք ցույց տալու նպատակով:

Այդ իսկ պատճառով հստակորեն սահմանված է, որ զինված ընդհարումների ժամանակ բժշկական ծառայության մշտական սանիտարական հիմնարկները (հիվանդանոցները, հոսպիտալները, բուժկետերը և այլն) և շարժական սանիտարական կազմավորումները (շարժական հոսպիտալները)՝

1. ոչ մի դեպքում չեն կարող ենթարկվել հարձակման,

2. ընկնելով հակառակորդի ձեռքը, նրանք կարող են շարունակել իրենց աշխատանքն այնքան ժամանակ, քանի դեռ հակառակորդն ինքը չի ապահովել նշված հաստատություններում գտնվող հիվանդների և վիրավորների անհրաժեշտ խնամքը

3. տեղակայել այնպես, որ ռազմական օբյեկտների վրա հարձակման դեպքում նրանք չվտանգվեն՝ դառնալով հարձակման պատահական զոհ:

Բժշկական-սանիտարական հաստատություններին ու կազմավորումներին տրամադրվող հովանավորությունը կարող է դադարել միայն այն դեպքում, երբ վերջիններս, բացի իրենց մարդասիրական պարտականություններից, օգտագործվեն նաև հակառակորդի դեմ ուղղված ռազմական գործողությունների մեջ: Այսպես, եթե ռազմական հոսպիտալն օգտագործվում է զինծառայողների տեղավորման կամ զինամթերքի պաշարները պահպանելու կամ այլ ռազմական բնույթի գործողություն կատարելու համար, ապա պետք է զրկվի մարդասիրական նկատառումներով իրեն տրամադրված պաշտպանությունից: Բժշկական-սանիտարական հիմնարկների, հաստատությունների ու կազմավորումների անձնակազմը, որը նախատեսված է բացառապես վիրավորներին և հիվանդներին գտնելու, հավաքելու, տեղափոխելու և բուժելու կամ հիվանդությունները կանխարգելելու համար, օգտվում է համապատասխան հովանավորությունից և պաշտպանությունից: Հակառակորդ կողմի իշխանության տակ ընկնելու դեպքում նրանք կարող են շարունակել կատարել իրենց պարտականությունները այն չափով, որչափ կպահանջեն վիրավորների սանիտարական վիճակը և թվաքանակը: Նման կարգավիճակով պահվող անձինք՝ բժշկասանիտարական հաստատությունների անձնակազմը, թեև չեն համարվում ռազմագերի, սակայն օգտվում են ռազմագերիների համար նախատեսված բոլոր արտոնություններից: Երևի թե ռազմական իրավիճակներում ավելի շատ, քան այլ դեպքերում մարդիկ հոգևոր օգնության կարիք ունեն: Անհիշելի ժամանակներից հոգևոր ծառայություններն ուղեկցել են բանակներին, զինված ուժերին՝ նրանց տրամադրելով անհրաժեշտ հոգևոր օգնություն և աջակցություն: Ելնելով նշված կարիքներից և հոգևորականների առանձնահատուկ գործունեության բնույթից՝ հոգևոր անձնակազմն օգտվում է նույն հովանավորությունից և պաշտպանությունից, որը տրամադրվում է նաև բուժանձնակազմին: Հոգևոր անձնակազմ ասելով պետք է հասկանալ ինչպես զինվորական (բանակային կապելլաններ), այնպես էլ քաղաքացիական հոգևորականներին, որոնք զբաղվում են բացառապես հոգևոր գործունեությամբ և մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կցված են կամ ընդհարման մեջ գտնվող պետության զինված ուժերին, կամ դրանց բժշկական և

սանիտարատրանսպորտային միջոցներին, կամ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներին: Ինչպես որ բուժանձնակազմը, հոգևորականները նույնպես գերի ընկնելու դեպքում ռազմագերու կարգավիճակ չեն ստանում, սակայն օգտվում են վերջիններիս տրամադրված բոլոր իրավունքներից ու արտոնություններից և կարող են շարունակել իրենց գործունեությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ընտանիքում են դրվում արմատներ, որից աճում են ու մեծանում թե ճյուղերը, թե ծաղիկները, թե պտուղները: Ընտանիքի բարոյական առողջության վրա է կառուցվում դպրոցի մանկավարժական իմաստությունը»

Վ. Սուխոմլինսկի

Այսպիսով սովորողներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններ ու խնդիրներ, որոնց լուծումները էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված և համակրագված ձևով:

Ծնողներն ու ուսուցիչները նույն երեխայի դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունը արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակման խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Ուսուցիչների եւ ծնողների միջեւ հարաբերությունները կառուցվում են միջնորդի միջոցով, այսինքն, այն աշակերտի միջոցով, որը ներառում է երկու ինքնավար ազդեցություն ունեցող միկրոմիջավայրեր ' դպրոցական եւ ընտանեկան: Այս երկու միկրոմիջավայրերի օպտիմալ տարբերակումները պետք է միաձուլվեն: Ուսուցիչը պետք է դառնա ընտանեկան միկրոմիջավայի մի մասը (որպես իրենց

սանիտարատրանսպորտային միջոցներին, կամ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներին: Ինչպես որ բուժանձնակազմը, հոգևորականները նույնպես մասը (որպես ընդհանուր մանկավարժական գործընթացի մասնակիցներ):

Կա ևս մեկ հանգամանք, որը չի կարող հաշվի չառնվել ընտանիքի և դպրոցի բարոյական հարաբերությունները ուսումնասիրելիս. դպրոցը կամ զարգացնում է ընտանիքում երեխայի բարոյական հատկանիշները, կամ ստիպված է վերադաստիարակել այն: Եվ այս, և մյուս դեպքերում ուսուցիչը պետք է իմանա ընտանիքում կոնկրետ բարոյական իրավիճակը, իսկ ծնողները պետք է իմանան ուսուցչի մանկավարժական և բարոյական պահանջները: Առանց այդ փոխճանաչելիության անհնար է իրականացնել երեխաների բարոյական զարգացման մանկավարժական կառավարումը, հաջողությամբ իրականացնել մանկավարժության սկզբունքներից մեկը ՝ ընտանիքի և դպրոցի պահանջների միասնականության սկզբունքը : Այս սկզբունքը հիմնված է խորը փոխըմբռնման և երեխաների ճակատագրի հանդեպ պատասխանատվության վրա.